

աւելացնել իրանց բաժանորդագրելու, բաւական է ինչքան վճարել իրանց. Անգլիոյ կաթնի հաշիւը այնքան լրացնելու չունեն, որ նրանց հաշիւը զօրաւ համարվի զոնէ ունեցածները պահպանելու, իսկ որ 10 ր., տարեկան կարողանում է տալ, կարծում ենք, կարող է և 1 ր. էլ աւելացնել:

Շիրմանդաղէ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍԻ բոլոր գուարճութիւններէ, մեր հասարակութիւնը այժմ ամենից շատ յաճախում է Գօրծֆորու եղբայրներէ ցերեկը, որ շատ ընտիր խումբ է բերել այս անգամ:

ԲԱՎՈՒՅՑ մեզ գրում են թէ այդ քաղաքում զիւնթայն գողութիւններ, աւաղակութիւններ և մարդասպանութիւններ շատ յաճախ են սկսել կրկնվել:

«Մշակի» երէկվայ համարի բանասիրականի բաժնում ապոված յօդուածը Կ. Պօլսի «Տնտեսական միութեան» մասին խորհուրդ ենք տալիս Կ. Պօլսի հայերին ուշադրութեամբ կարդալ: Մենք յօդուածագրի մտքի հետ համաձայն ենք, և միշտ մի և նոյն միտք ենք յայտնել, թէ Հայաստանի անտեսական և ուսումնական կողմը բարւոյնքու համար պէտք է գործել նոյն խոյ Հայաստանում և ոչ թէ Բոսֆորի ափերում: Նոյնպէս ուղիղ է որ Հայաստանը անտեսական բարւոյնքու համար նախ և առաջ պէտք է իրագործել երկրի թէ քրիստոնեայ և թէ մահմանական ազգաբնակչութեան մէջ զուգական ընկերակցութիւններ և համայնական ընկերութիւններ: Այդ միջոցով միայն կարելի կը լինի կապել հայաստանցի բոլոր ցեղերին պատկանող ազգաբնակչութեան շահերը միմեանց մէջ, հաշտեցնել միմեանց մէջ թշնամական ցեղերը և քաղաքակրթութեան աւելի ստոր զարգացման աստիճանի վրա գրոված ցեղերը ենթարկել հայ ցեղի կուլտուրական ներգործութեանը:

Վիեննայի «Էսթրիա» թերթում կարդում ենք որ վիեննայում մի քանի շաբաթ առաջ եղած աշխարհագրական ժողովի ժամանակ հայր Վանդ Ալիան ներկայացրեց իր յօրինած Հայաստանի քարտէզը և արտասանեց մի փառաւոր ճառ Հայաստանի անցեալի և հայտն ազգի ներկայ գրութեան վրա: Այդ ճառը ընդունվեցաւ գիտնականներից և հանդիսականներից սատակ ծափահարութիւններով:

«Кавказ» լրագրում կարդում ենք որ այդ պաշտօնական լրագրի, որ խմբագրում է պ. Վ. օրօնով, առած է այժմ պայմանագրով, երեք տարի ժամանակով, իշխան Կապիթ Լիւրստովին: Նոր խմբագիրը, ասում են, ստանալու է կառավարութեան տարեկան 4000 ռուբլ օժանդակութիւն:

Մեր թղթակիցը ՎԱՂԱՐՇԱՊԱՍԻՑ հաստատում է այն լուրը, որ ճեմարանի վարչութիւնը արդելու է աշակերտներին «Մշակ» լրագրի կարդալ: Բացի սորանից բէկտօր Նահապետանը արդելու է աշակերտներին վանքը մտնել, իսկ Վաղարշապատ գիւղում, որտեղ աշակերտները կարող են տեսնել անբարոյականութեան շատ օրինակներ, արդելու է աշակերտներին ազատ չլնել: Սթթէ այդ է նշանակում պաշտպան լինել եկեղեցու, այժմանից արդեն թերահաւատութիւն յարուցանել աշակերտների մէջ զէպի վանքը և վարդապետները:

Եղանակը Թիֆլիսում դարձնալ փոխվել է այս մի քանի օրերս: Գանկարծ սկսված ցրտերը փոխվեցան աւելի մեղմ եղանակի:

Ռուս լրագրիւններում կարդում ենք որ երեկի ֆրանսիացի դերասանուհի Սարա Բէրնար, որ ինչպէս յայտնի է ծագումով հրէուհի է, Ս. Պետերբուրգում իր առած ներկայացումներից զոյգացած 50,000 ռուբլ գումարը նուիրել է ռուս հրէաներին օժանդակող կոմիտէին, նրանց գաղթականութիւնը զէպի Ամերիկա հեշտացնելու համար:

ՇԱՄԱԼՈՒՅՑ մեզ գրում են: «Տեղիս սրբազան առաջնորդը իր հակառակ կուսակցութեան մի

նշանաւոր անձի հետ հաշտեցաւ քանի մի օր սրանից առաջ: Հաշտութեան առիթն եղաւ այդ անձի, պ. Ներսիսեանցի վից տարեկան մանուկի վախճանվելը: Թաղման օրը սրբազանը, իր օգնական վարդապետի հետ միասին, այցելեց պ. Ներսիսեանին և միմիկարեց նրան և նրա ընտանիքը իր ազգու խօսքերով: Ցանկալի է որ սրբազանը հաշտվի իր հակառակ կուսակցութեանը պատկանող և միւս անձանց հետ, առանց սպասելու որ նրանց մանուկները մեռնեն:

Մեզ գրում են Շամալուց: «Գուցէ հայաբնակ քաղաքներից ոչ մինի մէջ այնքան չեն հաւատում նոյնքանի 15-ին լինելու աշխարհի վերջանալուն, որքան Շամալի քաղաքում»:

Մեզ գրում են Կ. Պօլսից որ «Մշակի» մէջ ապոված «Միշտ մատուցելու» վերնագրով առաջ նորոգող յօդուածը արտասպովեցաւ Կ. Պօլսի ոչ թէ միայն հայոց, բայց գրեթէ բոլոր լրագրիւնների մէջ և շատ խոր ազդեցութիւն գործեց հայ հասարակութեան վրա, որ այժմ սաստիկ զգուշաց և ատելութիւն է զգում զէպի աշխարհի մարդիկ, որոնք այդ տեսակ վատ և քսու միջոցներով կաշկանդում են ազգային գործերի առաջադիմութիւնը:

Ռուսաստանը ստնում է այս բազմա միլիոնի նուաճման 300 տարվայ տարեդարձը:

Այսօր բերլինը ստնում է պրոֆէսոր Բուզովի վերլուծի 60 տարվայ տարեդարձը և նրա պրոֆէսորութեան 25 տարվայ տարեդարձը: «Մշակի» խմբագրութիւնը երէկ ուղարկեց պրոֆէսորին մի նորաւորական հեռագիր:

Տպում ենք «Մշակի» ներկայ համարում Ն. Տ. Գ. ստորագրութեամբ խմբագրին ուղղված մի նամակ, որով և վերջ ենք տալիս երկու հայ ուսանողների մէջ ապարդիւն պօլէմիկային:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ПОРЯДОКЪ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Փարիզում զանազան տեսակ տօներ են կատարվում. կան պատմական տօներ, ազգասիրական կամ բոլորովին պատահական, և վերջապէս մօղային: Նոյնների երկուսը, «նշեցեալների օրը», բուն փարիզական տօն է: Այդտեղ աստուածաբանական ոչինչ աւանդութիւններ չը կան, դա բոլորովին քաղաքական տօնախմբութիւն է. ամենալաւ ապացոյց դրա այն փաստն է, որ նշեցեալների օրը սկսվում է մէկ օրով վաղ, այսինքն հէնց Toussaint-ի օրը, երբ եկեղեցիների բոլոր զանգակները ածվում են, հաւատացեալներին հրաւիրելով: Բայց հաւատացեալները, մինչև անգամ նրանք, որոնք ոչ մէկ կիրակի չեն թողնում, եկեղեցի չեն գնում, բոլորը գերեզմանոցներում են, զարդարելով գերեզմանները թաւած ծաղիկների փնջերով և անթաւում ծաղիկներից կազմված պսակներով:

Տեսնելով մարդկանց, կանանց և երեխաների այդ երկար շարքերը, որոնք գնում են ամեն փողոցներով, դիմելով զէպի քաղաքային գերեզմանոցները, առաջին անգամ մարդը կարող է կարծել, որ դա մէկ ընտանեկան, նահապետական ծէս է՝ յարգանք ցոյց տալ նոր մեռած ազգականների և մեթաւորների նշխարներին: Բայց ոչ, այդ պսակներ տանող մարդիկնանց մեծամասնութիւնը չունի ազգականական դաւբարաններ: Այդ մարդիկնանց հայերը և զաւակները, որոնք հազիւ թէ օրական ապրուստ ունեն, վերջացնում են իրանց թշուառ կեանքը «ընդհանուր փոս» մէջ, կամ քաղաքից դուրս գտնված մի օր և է գերեզմանոցում: Նրանք շատ անգամ չը գիտեն, թէ որտեղ է թաղված իրանց

պապը, նրանք շատ անգամ չեն յիշում թէ ի՞նչ տեղ են յաւիտենական քնով հանգստանում իրանց զաւակները, որոնք մեռել են, շատ կարելի է մի հեռու տեղ, ուր ուղարկված են եղել ապրուստ գտնելու համար: Այնու ամենայնիւ մեծ խուճրթով գնում են նրանք Պէրլաշէզի և Մօնմարտի գերեզմանոցները, այսինքն այնպիսի տեղեր, որտեղ նրանք չունեն ոչ ազգականների և ոչ ծանօթների գերեզմաններ, — գնում են նրանք ամբողջ ընտանիքներով և գերեզմանոցում ամբողջ ժամերով թափառում են:

Դա ի՞նչ օտարաւոր և անշարժաւոր սովորութիւն է: Ի՞նչ է որոնում խառնիճազան՝ ամբողջ իրան օտար գերեզմանների մէջ: Ամենքին յայտնի է, որ Փարիզի ազգաբնակչութիւնը յարգանքով է վերաբերվում զէպի իր հին, դարեւոր ծեսերը. նշեցեալներին, կամ աւելի լաւ ասած, անցեալ սերունդներին յիշատակելը, — այդ ծէսերից մէկն է: Ի՞նչպէս սկսվեցաւ նա, ի՞նչպիսի առանձին հանգամանքներով ամրացաւ և զարգացաւ դա: Դա այն հասարակական հարցերից մէկն է, որոնց մասին շատ կարելի է խօսել, բայց ոչինչ չէ կարելի ասել: Ասում են, որ գալիքը շատ յարգում էին հանգուցեալներին, աւելացնում են վերջապէս, որ կրօնական երկպառակութիւնները և պատերազմները ստեղծեցին ժողովրդի մէջ այդ յարգանքը զէպի գերեզմանոցները, որոնց մէջ զիգված ընկած էին լինում ազգականների և սիրելիների դիակները: Բայց այդ բոլորը ենթադրութիւններ են և դեռ ոչ ոք չէ կարողացել վճռել այդ մօլթ հոգեբանական հարցը:

Որ փարիզեցիները յարգանք են յայտնում նշեցեալներին — դրա մէջ կասկած չը կայ, դա մինչև անգամ զարմացնում է օտարականներին:

Չեմ խօսում արդէն գերեզմանոցները յաճախելու մասին, դամբարանների մաքուր պահելու մասին, այն հակակրօնական մասին, որը մինչև անգամ ինտելիգենտ հասարակութեան մէջ զարթեցնում է մարմիններ, այրելու պրօէկտը, և այն մեծ նշանակութեան մասին, որ փարիզեցիք տալիս են թաղման վերաբերեալ ամենայն օրէնսդրական միջոցներին: Նայեցէք ամենապարզ և աղքատ յուղարկաւորութեան հանդիսին. մի ձի քարշ է տալիս փայտե մէկ սայլ. սայլի ետից գնում են երկու երեք մարդիկ — նրանք բոլորը սեւի մէջ են: Նրանք իրանց վերջին կապէկներով առել են սեւ շորեր: Ճանապարհին ամենքը մէկ կողմն են քաշվում, օմնիքուսները և կառքերը կանգնում են, տղամարդիկ բոլորը առանց բացառութեան զխաբկները հանում են, կանայքը կրծքը խաշ են հանում, չունենալով յարգանքը յայտնելու. մի ուրիշ արտաքին նշան, և այդ մարդիկը և կանայքը պատկանում են ամեն տեսակ դասակարգերին. դրանց մէջ կան և հարուստներ, և տղաքաններ, և անտառուածներ: Ահա ձեզ մի այլ շատ կարելի է, աւելի նշանաւոր փաստ: Փարիզի ամեն մի բնակիչ շատ ծանօթներ ունի, հեռեւաբար, յաճախ են լինում թաղելու զէպերը, և նա թաղում է նրանց, եթէ մէկ առանձին կարգից դուրս արգիւք չը կայ, ով որ լինի նա, գործով մարդ թէ անգործ, յայտնի թէ անյայտ, վերջին պարագը տալ — այստեղ դատարկ ֆրազա չէ համարվում — դա բարոյական մի պարագ է, որը ամեն մարդ անպատճառ կատարում է, և զարմանալի բան, այդ պարտաւորութիւնը աւելի զօրեղ է դառնում, քանի որ

կրօնական համոզմունքները աւելի թուլանում են: Խորհրդաւոր անյայտ մահուան առաջ անհաւատ մարդիկներին մէկ բան է մնում միայն՝ յարգել հանգուցեալին:

Բայց նշեցեալներին յարգանք ցոյց տալը միայն ընտանեկան նեղ նշանակութիւն չունի, նա հասարակական և քաղաքական նշանակութիւն ևս ունի: Նոյնների 2-ին մահէք «ժիգիգմանոցը կամենաք, և հետեւեցէք ամբօխին, կանգնեցէք այնտեղ, որտեղ նա կը կանգնի, կարդացէք այն տապանագիրը, որ նա կարդում է, և զուգ մի քանի ժամում կը յիշեք վերջին կէս զարկայ բոլոր նշանաւոր անցքերը — մասնայի պատմական վիտելութիւնը այդ պերիօդից բարձր չէ գնում: Կապիմիր Պէրիէի, Կապա Նիակի, Կարելի, Բօդէնի, Լէզրիւ Բօլէնի, Միշլէի, Էդգար Բինէի, Թիէրի գերեզմանները ծածկված են ծաղիկներով. ծերուկ բերանէն մոռացված է, — մի քանի թարմ պսակներ դրված են նրա գերեզմանի վրա, չէ մոռացված և բանաստեղծ Միւսսէ, չեն մոռացված շատ ուրիշ, աւելի պակաս նշանաւոր գերեզմանները: Հասկանալի է, որ յիշատակարանների այդ այցելութիւնը ժողովրդի համար կրթողական մեծ նշանակութիւն ունի. նա մէկ ծառուղից միւսը անցնելով, այդտեղ անցնում է և ժամանակակից պատմութեան մէկ դասընթացը: Այդ օրվայ բոլոր լրագրիւնները խօսում են քաղաքի վրա փորագրված զանազան տօներ, ների մասին, իսկ հետաքրքիր մահուան այդ զաշտի վրա բացատրում են Ֆրանսիայի քաղաքական կեանքի այս կամ այն փաստերը:

ԱՆԳԼԻԱ

Նորբուռն ամբողջ Անգլիայում քաղաքային խորհրդարանի անդամների ընտրութիւններ կատարվեցան: Գրեթէ ամեն տեղ պահպանողականները յաղթող հանդիսացան, մանաւանդ այն քաղաքներում, ուր իրանդացիները մեծամասնութիւն են կազմում: Իրլանդացիները կամ չէին քուէարկում, կամ պահպանողականներին էին քուէ տալիս:

Թէպէտ Իրլանդիայի խաղաղացնելը դեռ ևս հարց է, այնու ամենայնիւ «Times» լրագրիւր յարձակվում է եւրօպական մամուլի վրա, որ նա փոստերը դիտմամբ աղուաւորում է: «Times» նկատում է, որ իրլանդական հարցը ոչ մի անգամ անհամապատասխան չը պատճառեց Լօնդօնի Բօրսային, որ շատ զգայուն է զէպի եւրօպական հարցերը:

Իրլանդացիների անբաւականութիւնը ՆՇանակութիւն կունենաւ Անգլիայի համար, եթէ նա պատերազմ սկսէր որ և է եւրօպական պետութեան հետ: Լօնդօնի զէպերիկը են կրում Լիգիպտոսի գործերի զէպութեան պատճառով: Նոր լուրերի համաժապ պատերազմական շրջանների մէջ սկսված ազգային շարժումը տարածվում է ժողովրդի մէջ: Խեղիվ առանձին հաւատ չէ ընծայում իր առաջին միմիստը Շերիֆ փաշային:

Իրլանդական կալուածական դատարանը չը գիտէ ինչպէս վերջացնել իր քննութեանը առաջարկված բոլոր գործերը: Դատարանին 15,000 ինդիւսեր են տուած, որոնք բոլորն էլ կալուածատերերի և ֆերմերների վճարի մասին են: Իրլանդական կալուածական օրէնքի հեղինակները չը նախատեսեցին, որ ֆերմերները այդպիսի ընդարձակօրէն զանգատներ կը տան դատարանին, որի կազմակերպութիւնը և միջոցները բաւականացուցին չեն: Մի քանի

լրագիրներ պատմում են, որ կալուածական միութիւնը օգուտ է քաղել այդ հանգամանքից: Տեսնելով դատարանի դժուար դրութիւնը, միութիւնը դրդել է իրանդա-ցիներին օգտվել կալուածական օրէնքից և իրանց վէճերը անյապազ այդ դատարանին առաջարկել:

ՖԻՆԱՆՍԻԱ

Գերմանական զեռպանը փարիզի մէջ, իշխան Զօհնիօէ, խօսելով հանրապետութեան նախագահի հետ, ցաւակցութիւն յայտնեց Բարոնի մի Սինտ-Լիւբրի ապագայ հրաժարականի առիթով, որը, արտաքին գործերի մինիստրի պաշտօն փարիզով, միշտ բարեկամարար էր փերարեթովմ գերմանիա-յին: Իշխան Զօհնիօէի խօսքերի համեմատ, գերմանական կառավարութիւնը կասկածանքներ չունի Գամբետայի մինիստրութեան մասին: Գեռ ևս ոչինչ յայտնի չէ նոր մինիստրութեան կազմակերպութեան մասին, որովհետեւ Գամբետա ոչ որի առաջարկութիւն չէ առել: Նա իր ժամանակը զիւաւորապէս անցնում է Վիլ-Գալ-րէի մէջ: Նա նորեւմտ հեգնութեամբ փերարեթեցաւ այն լուրերին, որոնք տարածված էին նրա տեսակցութեան մասին իշխան Բիսմարկի հետ:

"Times" լրագրի փարիզի թղթակիցը նկարագրում է Ուէլսի իշխանի տեսութիւնը Գամբետայի հետ: Նրանք միմեանց հանդիպեցան նախաձեռնիկի ժամանակ, որին ներկայ էին իշխանի քարտուղար Ֆրէնսիս Զօլլիս, Չարլզ Գիլի և զնգապետ Կլիբի: Իշխանը առաջ էլ տեսնվել էր Գամբետայի հետ, բայց այն ժամանակից նրանց յարաբերութիւնները սառել էին, որովհետեւ Ուէլսի իշխանը շատ ուշադիր էր դէպի Բօնապարտի ընտանիքը: Կամեալով այդ սառնութեանը վերջ դնել, իշխանը ցանկութիւն յայտնեց տեսնվել Գամբետայի հետ: Գամբետայի բարեկամները պատմում են, որ իշխանը շատ լաւ ապաւորութիւն է գործել նրա վրա: Խօսակցութիւնը 2 ժամից աւելի է տևել: Կրք սկսել են խօսել Գամբետայի տեսութեան մասին իշխան Բիսմարկի հետ, Գամբետա ծիծաղել է և նկատել, որ նա չէ էլ մտածել Բիսմարկի հետ տեսութեան մասին և որ նա երեք անգամ դադարի ծանապարհորդել է Գերմանիա, մինչդեռ ամենքը կարծել են, թէ նա ապրում է Վիլ-Գալրէի մէջ: Բայց իր ծանապարհորդութիւններից ոչ մէկի ժամանակ նա չէ մտածել իշխանի հետ տեսութեան մասին, թէպէտ զիտէր, որ ինքը լաւ ընդունելութիւն կը գտնի:

Տունիսից հաղորդում են, որ բէյը, պատասխանելով Բուստանի շնորհաւորութիւններին բայրամի առիթով, յոյս յայտնեց, որ Ֆրանսիան շուտով կը ճնշէ ապստամբութիւնը և որ Տունիսը բարբորութեան մէջ կը լինի Ֆրանսիայի հովանաւորութեան տակ: Մի գնեկաւորին բէյը ասել է, որ արաբները կրօնը պատուիրում է նրանց միշտ հպատակվել իրանց կառավարիչներին: Եթէ մի քանի ցեղեր անհնազանդ են յայտնվել, նրանց շուտով կարելի է ճնշել:

ԳԵՐՄԱՆԻԱ

Ընտրողական մեքառուին Գերմանիայի մէջ շարունակվում է կրկնաբար կարգութիւնների պատճառով: Առաջին օրը ազատամիտները երկու տեղ յաղթեցին: Կարլսրուէի մէջ, որ միշտ պահպանողական պատգամաւորներ էր ունենում, մի շրջանը ազատամիտ պատգամաւոր ընտրեց, իսկ միւսը ա-

ռաջադէմ: Հակասեմիտական ցոյցեր գործող պալատական քարոզիչ յայտնի Շտէօկէր հեռացրած է իր պաշտօնից իշխան Բիսմարկի և թագաժառանգի պահանջի համեմատ: Կոմս Վիլհելմ Բիսմարկ, որին Բերլինի հակասեմիտները առաջարկում էին իրանց կանդիդատ լինել, խառնութեամբ մերժեց այդ առաջարկութիւնը: Երեւում է, որ կառավարութիւնը նոր ընտրութիւններից յետոյ ուրիշ կերպ է արամադրված:

"Post" լրագիրը մի յօդուած է տպել, որի մէջ ի միջի այլոց ասված է. իշխան Բիսմարկ շուտով կը վերադառնայ Բերլին, որպէս զի հաշիւ ներկայացնել կայսրին կառավարութեան ապագայ գործունէութեան մասին ընտրութիւններից յետոյ: Լրագրին հաղորդում են պետական կանցլէրի յայտնութիւնը, որ նա ձանձրացել է նախանձի, ցածրութեան, բամբասանքի և տախտիւթեան խաղալիք լինելուց, որոնք արձագանք գտան 45 միլիօն ժողովրդի մէջ: Յօդուածը այն եզրակացութեան է հասնում, որ Բիսմարկի յաջորդը առաջադէմ կուսակցութեամբ անկարող կը լինի կառավարել երկիրը միապետական ոգով:

Այդ յօդուածի նպատակն է ցոյց տալ, որ իշխան Բիսմարկ կարող է հրաժարական տալ: Կիսապաշտօնական "Post" լրագիրը այդպիսի յայտնութիւններին համար է գործադրում: Իշխան Բիսմարկի հրաժարականի մասին սպառնալիքը մի կողմնակի պատասխան է ընտրութիւններին: Գերմանացիները իշխան Բիսմարկին «կայսերական զաղափարի» կենդանի պատկեր են համարում: Այդ անուան հետ կապված են նրանց ամենափառաւոր յիշատակները և նրան արտաքին բաղա-բական հանգամանքների զրաւական են համարում: Գերմանական և մանաւանդ պրուսական հասարակութեան մեծամասնութիւնը չէ կարող երևակայել գերմանական կայսերութիւնը ուրիշ կերպ, որ նրա կառավարչական ղեկը Բիսմարկի ձեռքին չը լինի: Գոնեւ մինչև այժմ այդպէս է եղել և Բիսմարկի սպառնալիքը իր հրաժարականի մասին միշտ չափաւորել է ընդդիմա-դրականների յարձակմունքները: Թէպէտ այժմ հանդամանքները փոխվել են և ընտրութիւնների ժամանակ էլ յաղթող հանդիսացան այն պատգամաւորները, որոնք իրանց նշանաբանն էին զրել իշխան Բիսմարկի անկումը, այնու ամենայնիւ անկարելի է, որ Բիսմարկի սպառնալիքը ազդեցութիւն չը գործի:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՒՄՅԻՑ

Կ. Պոլիս, 26 հոկտեմբերի

Ամեն ինչ հայոց մէջ վաճառովի է և կաշառելի: Նաեւ միտք, նաեւ հոգի, նաեւ ձիւք և շնորք, որ բաժանում է Աստուած մարդկանց ազատ տը-նօրինութեան և անկախ կացութեան համար: Հայի շահախնդիր բնաւորութիւնը ընդունակ է իր մանր ետակաւութեան համար խաղալիք չինել Աստուծոյ ամենայն պարգեւը, ամենայն վերին տուրքը: Այս օրերս անցաւ Կ. Պոլիսով դէպի Աթինը և Զօւմ յայտնի նկարիչ Իվան Ալվազովս-քի: Նա մնաց այստեղ մօտ մի շաբաթ: Նորանայնցեցին, ի հարկէ, ամեն դասակարգի հայեր՝ վարժապետ, վարդապետ, ուսումնական, արուեստաւոր, թղթակից, խմբագիր և այլն: Երկու երկրպագութեան վաղեցիկը՝ հարցրի այցելողներին մէկին, որը յայտնի մի գիտնական է:—Այդ պիտի տաղանդաւոր հայուն հապա թնչպէս անտես առնէինք: Եղաւ պատասխան:—Բայց ինչ օգուտ հայերին այն մարդու տաղանդից, որը իր կենանքի մէջ ասում են մօտ հինգ հարիւր նկար-ներ է չինել, իսկ նոցանից ոչ մէկը չէ նուիրած հայկական պատմութիւնից առած նիւթին: Նկատեցի:—Ալվազովսքին ծովանկար է, իսկ թնչ

ծովային կենսք և անցեալ կնայ հայոց մէջ, որ նա իր համար նիւթ առնէր: պատասխանեց ինձ ամենայն անկեղծութեամբ հայ գիտնականը: Ինչ որ հարկն էր ի հարկէ լսեց ինձից: Նայե՛ք աւելորդ չեմ համարում կրկնել մօտաւորապէս և ձեր ընթերցողների առաջ, ցոյց տալու համար թէ որչափ ընդունակ է մեր հին սերունդը կեղծել, տեսել, խաբել աշխարհը իրան